ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

29 օգոստոսի 2024
արձ. թիվ 13

Վավերացնում եմ
ՀԱԱՀ ռեկտորի պարտականությունները կատարող

Հ. Զաքոյան
29.08 2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2024-2029

ԵՐԵՎԱՆ 2024

Միջազգայնացումը ՀԱԱՀ բնականոն գործունեության անքակտելի մասն է և ամրագրված է ռազմավարական պլանում: Այն նպատակ ունի նպաստելու ՀԱԱՀ շարունակական զարգացմանը, ապահովելու միջազգային ճանաչում և կայուն գործընկերներ միջազգային գիտակրթական հարթակներում: ՀԱԱՀ ղեկավարությունը, անձնակազմն ու սովորողները կարևորում են կրթության և գիտության միջազգայնացումն ու համապատասխան ընթացակարգերով և գործողություններով նպաստելու են դրա իրականացմանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, հանդիսանալով ագրոպարենային համակարգի մասնագետների պատրաստման և ոլորտի մասնագետների վերապատրաստման միակ բարձրագույն կրթության կենտրոնը հանրապետությունում, հիմք ընդունելով.

- ՀԱԱՀ առաքելությունն ու ռազմավարական ծրագիրը,
- Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը,
- ՀՀ կրթական համակարգում նախատեսվող փոփոխությունները,
- միջազգային կրթական համակարգի զարգացման տենդեցներն ու ուղղությունները,
- միջազգային դրամաշնորհային կառույցների կողմից ներկայացվող առաջնահերթությունները

միջազգային կապերի ընդլայնման և միջազգային համագործակցության խթանման նպատակով որդեգրում է հետևյալ քաղաքականությունը.

- Դառնալ միջազգային բարձրագույն կրթական տարածքի մի մաս, լինել մրցունակ, առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:
- Լավագույն փորձի փոխանակման, աշխատակիցների և սովորողների շարժունության խթանման և սահուն իրականացման համար առավելագույնս ինտեգրվել եվրոպական միջազգային կրթական տարածքին:
- ՀԱԱՀ-ն դարձնել գյուղատնտեսության ոլորտի օտարերկրյա ուսանողների ուսուցման համար մրցունակ կրթօջախ:
- Աջակցել ՀԱԱՀ հետազոտողներին՝ գյուղատնտեսության ոլորտում հայաստանյան գիտական ներուժը և ձեռքբերումները ճանաչելի դարձնելու նպատակով:
- Գիտահետազոտական և ուսումնական ծրագրերի իրականացման առումով հասնել միջազգային որակական ստանդարտներին, համապատասխանեցնել ՀԱԱՀ-ի և

արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները:

- Կրթության և հետազոտական գործունեության միջոցով նպաստել առկա տեղական և միջազգային մարտահրավերների լուծմանը (սննդի անվտանգություն, ագրոտեխնոլոգիական գործունեություն, շրջակա միջավայրի պահպանություն, կայուն զարգացում):

Միջազգային համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ի հիմնական նպատակներն են.

- արտերկրում ՀԱԱՀ հեղինակության բարձրացում,
- համալսարանում և արտասահմանյան առաջատար բուհերում գործող մասնագիտական կրթական ծրագրերի և ուսումնական պլանների ներդաշնակեցում,
- ժամանակակից մարտահրավերներին համապատասխանող հետազոտության և կրթական ծրագրերի իրականացում,
- սովորողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության ապահովում՝ Հայաստանից արտերկիր և հակառակը,
- կրթական ծրագրերի և գիտական ձեռքբերումների արտահանում,
- ՀԱԱՀ-ն դարձնել արտերկրից ժամանած գյուղատնտեսության ոլորտի ուսանողների ուսուցման տարածաշրջանային կենտրոն:

Միջազգային համագործակցության ոլորտում համալսարանի խնդիրներն են.

- միջազգային չափանիշներին համապատասխան համալսարանի կրթական և գիտական գործունեության որակի ապահովում, Եվրոպական կրթական չափանիշների ներդրում և կիրառում,
- արտասահմանյան բարձրագույն գիտակրթական հաստատությունների հետ կապերի հաստատում և ուսանողական ու գիտամանկավարժական գիտակրթական փոխանակման ծրագրերի իրականացում,
- միջազգային կրթական և գիտահետազոտական ծրագրերի մասնակցություն և իրականացում,
- միջազգային կրթական որակական չափանիշների ներդնում և կիրառում,

- համալսարանի և արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների համադրում, արտասահմանյան արդյունավետ փորձի տեղայնացում,
- միջազգային շուկայում գյուղատնտեսության ոլորտի մրցունակ մասնագետների թողարկում, ներառյալ՝ նոր մասնագիտությունների և մասնագիտացումների հաշվին,
- նպաստել ՀԱԱՀ-ում «միջազգայնացում տանը» գործընթացի զարգացմանն ու իրականացմանը,
- տարաբնույթ միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացում՝ ՀԱԱՀ մարդկային ռեսուրսների անընդհատ կատարելագործման և ինստիտուցիոնալ կայունության ու զարգացման ապահովման համար: